# *Լիլիթ Վարոսի Սաքոյան*

*Ծնվել է 22 հունվար 1979թ. ք. Լենինական*

*Զոհվել է 07 դեկտեմբեր 1988թ.*

*9 տարեկան, 3-րդ դասարան, N 10 միջն. դպ. (Ֆրանսիական)*

*Գրել է 22 բանաստեղծություն:*

*Տպագրվել է.*

1988թ. դեկտեմբեր «Պիոներ» ամսագիր

1989թ. սեպտեմբեր 1-2. 4-5, 6. «Կամք»

երկլեզվյան օրաթերթ, Փարիզ

1989թ. թիվ 12 «Պիոներ» ամսագիր

1990թ. թիվ 7 «Պիոներ կանչ» թերթ

1991թ. հունվար «Արցախականչ»

1991թ. հունվար «Հիշողություն»

1992թ. մարտ, թիվ 4 (32) «Հայ գրող»

1992թ. մարտ թիվ 80 «Կումայրի»

1992թ. մարտ թիվ 28 «Կումայրի»

1992թ. ______ ,, ____ «Լուսավորիչ»

*1992թ. հրատարակվեց առաջին գիրքը*

*«Փշրված անուրջ» վերնագրով:*

*1992թ. 18 հունիս, տեղի ունեցավ գրքի*

*շնորհանդեսը Լենինականի Վարդան*

*Աճեմյանի անվան պետական դրամատիկական*

*թատրոն ( տեսանյութը պահպանվում է)*

*Գրքի ամբողջ հասույթը նվիրաբերվեց*

*ազատագրված Արցախ աշխարհի՝*

*Մայր Շուշիի առաջին դպրոցի կառուցմանը:*

*2008թ. Ահավոր երկրաշարժի 20-րդ տարելիցի*

*կապակցությամբ վերահրատարակվեց*

*գիրքը բանաստեղծությունների մատենա-*

*գիտությամբ: (Հովանավոր VIVA-cell-MTS)*

*2009թ. 18 մարտ, տեղի ունեցավ գրքի շնորհան-*

*դեսը Երևանի Խնկո - Ապոր անվան*

*մանկական գրադարանում: Նվիրաբերվեց*

*Հայաստանի մարզերի դպրոցների, ման-*
*կապարտեզների, հաստատությունների:*
*(տեսանյութը պահպանվում է)*
*2018թ. պատրաստ է տպագրության երկրորդ գիրքը:*
*Այն երկլեզվյան է՝ հայերեն - ռուսերեն*
*Ահավոր երկրաշարժի 30-րդ տարելիցի*
*կապակցությամբ: Հովանավորվել է*
*«Իմ քայլը» հիմնադրամի և անձամբ*
*Աննա Հակոբյանի հովանավորությամբ:*

*Արժանացել է մրցանակների ( նոմահու)*

1991թ. « Հայ գրող» թերթ, պոեզիայի
տարվա մրցանակ
1991թ. «Կումայրի» թերթի մրցանակ
1992թ. վաղամեռիկ Միքելե Կոսու-ի
մրցանակ (Իտալիա)
2008թ. անդրանիկ «Ձնծաղիկ» մրցանակ
Հայաստանի գրողների միություն
2010թ. «Ձնծաղիկ» մրցանակը վերանվանվեց
Լիլիթ Սաքոյանի անվան
«Ձնծաղիկ» մրցանակ






## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

1988 թ. դեկտեմբերյան երկրաշարժը ողբերգական էջեր գրեց մեր պատմության մեջ: Հազարավոր մարդիկ ցայսօր հոգեբանական ծանր կացության մեջ են: Տասնյակ հազարավոր զոհերի մեջ ծաղիկ հասակում կյանքից զրկվեցին նաև տաղանդավոր շատ բանաստեղծներ, նկարիչներ, երաժիշտներ, աշխարհին ու կյանքին սիրահարված, հազար կյանքով ապրող մարդիկ:

Այսօր անասելի դժվար է առանց սրտի դողի ու սարսուռի բացել ողբերգորեն զոհված ստեղծագործողների սարսռազդու էջերը:

Բողբոջ հասակում (ընդամենը 9 տարեկան) զոհվեց և Լիլիթ Սաքոյանը: Նա, որ զարմացած աչքերով էր չափում աշխարհը, թոթովախոս լեզվով գրել է 22 բանաստեղծություն:

Զսպելով կսկիծը՝ պատմության ու սերունդներին հանձնենք ծաղկափթիթ աղջնակի մաքրամաքուր ու փափլիկ ձեռքերով գրած այս տողերը: Ընթերցողները կզգան, թե ինչ կենսախինդ ծաղիկ է աճել, ասուպի պես առկայծել, անցել...

Գրական-գեղարվեստական խորհուրդը և Հանրապետական գրական հիմնադրամը որոշեցին հովանավորել ու առանձին գրքույկով հրատարակել դրանք: Խմբագրման ընթացքում աշխատել ենք չմիջամտել մանկականությամբ շնչող տողերին, որ դրանք երևան իրենց բնական տեսքով:

Գրքույկն անվճար ձևավորել է բանաստեղծ, նկարիչ Գարուշ Հարյանը:

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ՝ ՌՈՄԱՆՈՍ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՆԱԽԱԳԱՀ՝ ՍԱՄՎԵԼ ՍԱՖԱՐՅԱՆ





ՀՏԴ 891.981-1 Սաքոյան
ԳՄԴ 84Հ-5
Ս 298



*Գրքի հովանավոր* VIVACELL MTS


Կազմեց, խմբագրեց և առաջաբանը գրեց
ՌՈՄԱՆՈՍ ՍԱՀԱԿՅԱՆԸ


Սաքոյան Լիլիթ
Ս 298 Փշրված անուրջ: Բանաստեղծություններ /Լիլիթ Սաքոյան.- Եր.: ՀԳՄ հրատ., 2009.- 64 էջ:


Ժողովածուն ընդգրկում է 1988 թ. դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժին զոհ գնացած 9-ամյա Լիլիթ Սաքոյանի 22 բանաստեղծությունները, որոնք ոչ միայն հասուն մտքի արգասիք են, այլև ետմահու արժանացել են մի շարք մրցանակների:

Ընթերցողին սպասվում է անակնկալ՝ խորապես ապրելու աշխարհին սիրահարված աղջնակի հուզաթաթավ տողերը:


ԳՄԴ 84Հ-5

ISBN 978-9939-58-010-4



© Սաքոյան Լիլիթ, 2009



Տեղեկատու հեռ.՝ (093) 234 265
ՎԱՐՈՍ ՍԱՔՈՅԱՆ